


ՀՀ բանկային համակարգի 2008 թ-ի 2-րդ եռամսյակի
գործունեության համառոտ վերլուծությունը

2008 թ-ի 2-րդ եռամսյակի ընթացքում ՀՀ բանկային համակարգի գործունեության արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ հաշվետու եռամսյակում աճ է գրանցվել գրեթե բոլոր հիմնական ցուցանիշների գծով: Այսպես, համակարգի ընդհանուր ակտիվները հաշվետու եռամսյակում աճել են 10.9 %-ով կամ 89.6 մլրդ դրամով և եռամսյակի վերջում կազմել 908.5 մլրդ դրամ: Համեմատության համար նշենք, որ նախորդ տարվա նույն եռամսյակի ընթացքում ընդհանուր ակտիվներն ավելացել էր 38.0 մլրդ դրամով կամ 6.7 %-ով: Տեղին է նշել, որ ընթացիկ տարվա առաջին կիսամյակի ընթացքում ընդհանուր ակտիվներն աճել են 16.0 %-ով կամ 125.6 մլրդ դրամով, որը նախորդ տարվա համանուն ցուցանիշը գերազանցել է 91.2 %-ով կամ 59.9 մլրդ դրամով (նախորդ տարվա առաջին կիսամյակում ակտիվների աճը կազմել էր 12.1 % կամ 65.7 մլրդ դրամ): Ընդհանուր ակտիվների վերը նշված աճը հիմնականում իր արտացոլումն է գտել ֆիզիկական անձանց և տնտեսությանը տրամադրված վարկերում:

Վարկային ներդրումները 2-րդ եռամսյակի ընթացքում ավելացել են 13.7 %-ով կամ 65.8 մլրդ դրամով, իսկ ներդրումներն արժեթղթերում պակասել 22.5 %-ով կամ 22.5 մլրդ դրամով և 2-րդ եռամսյակի վերջում կազմել համապատասխանաբար 547.6 և 77.5 մլրդ դրամ, ընդ որում անցած տարվա 2-րդ եռամսյակի ընթացքում վարկային ներդրումներն աճել էր 13.6 %-ով կամ 36.9 մլրդ դրամով, իսկ ներդրումներն արժեթղթերում նվազել 0.2 %-ով կամ 0.2 մլրդ դրամով: Հարկ է նշել, որ ընթացիկ տարվա առաջին կիսամյակի ընթացքում վարկային ներդրումներն աճել են 28.2 %-ով կամ 120.4 մլրդ դրամով, ներդրումներն արժեթղթերում նվազել 18.4 %-ով կամ 17.5 մլրդ դրամով այն դեպքում, երբ նախորդ տարվա նույն ժամանակամիջոցում վարկային ներդրումներն աճել էին 20.9 %-ով կամ 53.2 մլրդ դրամով, իսկ ներդրումներն արժեթղթերում` 8.3 %-ով կամ 7.5 մլրդ դրամով: 2008 թ-ի հունիսի 30-ի դրությամբ համակարգի վարկային ներդրումները կազմել են ընդհանուր ակտիվների 60.3 %-ը, ընդ որում տնտեսությանը տրված վարկերի բաժնեմասը կազմել է ընդհանուր վարկային ներդրումների 46.3 %-ը կամ 253.4 մլրդ դրամ, և այս ցուցանիշը հաշվետու եռամսյակի ընթացքում աճել է 7.9 %-ով կամ 18.5 մլրդ դրամով, որը 2007 թ-ի 2-րդ եռամսյակի համանուն ցուցանիշը գերազանցել է 52.2 %-ով կամ 6.3 մլրդ դրամով: Միաժամանակ նշենք, որ առաջին կիսամյակի ընթացքում հիշյալ ցուցանիշի աճը կազմել է 21.6 % կամ 45.0 մլրդ դրամ, իսկ նախորդ տարվա նույն ժամանակամիջոցում այն կազմել էր 17.4 % կամ 23.0 մլրդ դրամ (աճը նախորդ տարվա առաջին կիսամյակի աճի համեմատ կազմել է 95.6 % կամ մոտ 22.0 մլրդ դրամ):

2008 թ-ի հունիսի 30-ի դրությամբ
վարկերի կառուցվածքը` ըստ տնտեսության ճյուղերի (մլրդ դրամ)



Ֆիզիկական անձանց տրված վարկերի աճը հաշվետու եռամսյակում կազմել է 20.4 % կամ 48.9 մլրդ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի նույնանուն ցուցանիշը գերազանցել է 114.1 %-ով կամ 26.1 մլրդ դրամով: Ընթացիկ տարվա երկրորդ եռամսյակի վերջում ֆիզիկական անձանց վարկերի ծավալը կազմել է ընդհանուր վարկային ներդրումների 52.7 %-ը կամ 288.8 մլրդ դրամ, որի կառուցվածքում սպառողական վարկերը կազմել են 194.0 մլրդ դրամ, իսկ հիփոթեքային վարկերը՝ 72.9 մլրդ դրամ: Հաշվետու եռամսյակի ընթացքում սպառողական վարկերի ծավալն աճել է 8.1 %-ով կամ 14.6 մլրդ դրամով, հիփոթեքային վարկերինը՝ 21.8 %-ով կամ 13.0 մլրդ դրամով, ընդ որում 2007 թ-ի 2-րդ եռամսյակում վերը նշված ցուցանիշների համապատասխան աճերը կազմել են 14.5 % կամ 11.6 մլրդ դրամ և 28.3 % կամ 7.6 մլրդ դրամ: Եթե նախորդ տարվա առաջին կիսամյակի ընթացքում ֆիզիկական անձանց վարկերի ծավալն աճել էր 38.8 %-ով կամ 39.7 մլրդ դրամով, այդ թվում սպառողական վարկերի ծավալը 23.5 %-ով կամ 17.3 մլրդ դրամով, իսկ հիփոթեքային վարկերինը՝ 46.6 %-ով կամ 10.9 մլրդ դրամով, ապա այս տարվա նույն ժամանակամիջոցում ֆիզիկական անձանց վարկերի ծավալն աճել է 39.2 % կամ 81.4 մլրդ դրամ, այդ թվում 51.4 %-ով կամ 65.8 մլրդ դրամով աճել է սպառողական և 35.0 %-ով կամ 18.9 մլրդ դրամով հիփոթեքային վարկերի ծավալը: Մինևույն ժամանակ նշենք, որ այս տարվա հունիսի 30-ի դրությամբ սպառողական վարկերի ծավալը կազմել է ընդհանուր վարկային ներդրումների 35.4 %-ը (տեսակարար կշիռը մարտի 31-ի համեմատ նվազել է 1.8 տոկոսային կետով), իսկ հիփոթեքային վարկերինը՝ 13.3 %-ը (տեսակարար կշիռը մարտի 31-ի համեմատ աճել է 0.9 տոկոսային կետով):

Երկրորդ եռամսյակի ընթացքում ընդհանուր ակտիվների ամենաբարձր տոկոսային աճը գրանցվել է «Առէկսիմբանկի» մոտ՝ 50.8 %, որը դրամական արտահայտությամբ կազմել է մոտ 9.9 մլրդ դրամ, իսկ ամենաբարձր նվազումը՝ «Սելլաթ Բանկի» մոտ 11.1 % կամ 1.4 մլրդ դրամ: Սակայն պետք է նշել, որ բացարձակ մեծությամբ ընդհանուր ակտիվների առավելագույն աճ ապահովվել է «ՎՏԲ Հայաստան Բանկի» կողմից և այն կազմել է 27.5 մլրդ դրամ, երկրորդ ցուցանիշը ապահովել է «Յունիբանկը»՝ 11.6 մլրդ դրամ, իսկ երրորդ ցուցանիշը՝ «Ամերիաբանկը», որը կազմել է 9.2 մլրդ դրամ:


Տնտեսությանը վարկավորման ամենամեծ ծավալներն ապահովել են Արդշինինվեստբանկը՝ 38.0 մլրդ դրամ, «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանը»՝ 33.3 մլրդ դրամ, «ՎՏԲ Հայաստան Բանկը»՝ 31.1 մլրդ դրամ, «Կոնվերս Բանկը»՝ մոտ 18.1 մլրդ դրամ և «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկը»՝ 15.8 մլրդ դրամ, իսկ ֆիզիկական անձանց վարկավորման գծով առաջատար դիրքերում են գտնվում «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ

Բանկը՝ 50.2 մլրդ դրամով, «Արդշինինվեստբանկը»՝ 33.6 մլրդ դրամով, «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանը»՝ 30.1 մլրդ դրամով, «ՎՏԲ Հայաստան Բանկը»՝ 29.3 մլրդ դրամով և «Յունիբանկը»՝ 26.6 մլրդ դրամով: Համակարգում հիփոթեքային վարկերի գծով առաջին հնգյակում են՝ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանը»՝ 20.0 մլրդ դրամով, որը կազմել է համակարգի հիփոթեքային վարկային պորտֆելի 27.4 %-ը, «Յունիբանկը»՝ 11.4 մլրդ դրամով (15.6 %-ը), «ՎՏԲ Հայաստան Բանկը»՝ 10.7 մլրդ դրամով (14.7 %-ը), ընդ որում երկրորդ եռամսյակում «ՎՏԲ Հայաստան Բանկն»ն ապահովել է նաև հիփոթեքային վարկերի ծավալի ամենամեծ աճը, որը բացարձակ մեծությամբ կազմել է 4.4 մլրդ դրամ, «Կոնվերս Բանկը»՝ 2.9 մլրդ դրամով (4.0 %-ը) և «Կասկադ Բանկը»՝ 2.8 մլրդ դրամով (3.8 %-ը):

Պետական գանձապետական պարտատոմսերում ՀՀ-ում գործող բանկերից առավելագույն ներդրումներն ունեն «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանը»՝ 13.7 մլրդ դրամ և «Յունիբանկը»՝ 9.2 մլրդ դրամ:

ՀՀ բանկային համակարգի ակտիվները և վարկային ներդրումները 2008 թ-ի հունիսի 30-ի դրությամբ


Մլրդ դրամ



2008 թ-ի հունիսի 30-ի դրությամբ ՀՀ բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունների ծավալը կազմել է մոտ 709.5 մլրդ դրամ, որը 2-րդ եռամսյակում աճել է 11.7 %-ով կամ 74.0 մլրդ դրամով: Համեմատության համար նշենք, որ վերոնշյալ ցուցանիշն անցած տարվա նույն եռամսյակում աճել էր 5.8 %-ով կամ 26.0 մլրդ դրամով: Ընդհանուր պարտավորությունների եռամսյակային աճը պայմանավորված է նաև բանկերի կողմից ֆիզիկական անձանցից ներգրավված ժամկետային ավանդների 17.5 % կամ 24.5 մլրդ դրամի և ցպահանջ ավանդների 36.8 % կամ 20.4 մլրդ դրամի չափով ավելացումներով: Տեղին է նշել, որ հաշվետու եռամսյակի ընթացքում ֆիզիկական անձանց համախառն ավանդներն (ցպահանջ և ժամկետային) աճել են 23.0 %-ով կամ 44.9 մլրդ դրամով և եռամսյակի վերջում կազմել 240.5 մլրդ դրամ կամ ընդհանուր պարտավորությունների 33.9 %-ը: Համակարգի իրավաբանական անձանց համախառն ավանդները հունիսի 30-ի դրությամբ կազմել են 211.6 մլրդ դրամ կամ ընդհանուր

պարտավորությունների 29.8 %-ը, և եռամսյակի ընթացքում գրանցվել է 6.4 %-ի կամ 14.5 մլրդ դրամի չափով նվազում, ընդ որում իրավաբանական անձանց ցպահանջ ավանդները նվազել են 6.6 %-ով կամ 8.4 մլրդ դրամով, իսկ ժամկետային ավանդները՝ 6.2 %-ով կամ 6.1 մլրդ դրամով: Վերոնշյալին միայն ավելացնենք, որ ընթացիկ տարվա առաջին կիսամյակի ընթացքում բանկերի ընդհանուր պարտավորություններն ավելացել են 14.8 %-ով կամ 91.5 մլրդ դրամով, այդ թվում ֆիզիկական անձանց համախառն ավանդները 21.2 %-ով կամ 42.1 մլրդ դրամով այն դեպքում, երբ նախորդ տարվա նույն ժամանակամիջոցում ընդհանուր պարտավորություններն ավելացել էր 10.8 %-ով կամ 45.9 մլրդ դրամով, այդ թվում 15.2 %-ով կամ 22.0 մլրդ դրամով ավելացել էր ֆիզիկական անձանց համախառն ավանդները:

Համակարգի ցպահանջ և ժամկետային ավանդների կառուցվածքը
2008 թ-ի հունիսի 30-ի դրությամբ (մլրդ դրամ)




- Իրավաբանական անձանց ցպահանջ ավանդներ
- Ֆիզիկական անձանց ցպահանջ ավանդներ
- Իրավաբանական անձանց ժամկետային ավանդներ
- Ֆիզիկական անձանց ժամկետային ավանդներ

Միաժամանակ արձանագրենք, որ 2-րդ եռամսյակի վերջում ֆիզիկական անձանց համախառն ավանդների (ցպահանջ և ժամկետային) առավելագույն ծավալ գրանցվել է «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանի» կողմից՝ 50.8 մլրդ դրամ, երկրորդ ցուցանիշն ապահովել է «Յունիբանկը»՝ 34.8 մլրդ դրամ, իսկ երրորդը՝ «Արդշինինվեստբանկը»՝ 23.8 մլրդ դրամ, ընդ որում ժամկետային ավանդների գծով ամենամեծ ծավալ ապահովել է «Յունիբանկը»՝ 30.4 մլրդ դրամ, երկրորդ ցուցանիշը պատկանում է «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանին»՝ 23.4 մլրդ դրամ, իսկ երրորդը՝ «Արդշինինվեստբանկին»՝ 19.2 մլրդ դրամ:

Երկրորդ եռամսյակի կտրվածքով տոկոսային արտահայտությամբ ընդհանուր պարտավորությունների ամենամեծ աճ արձանագրվել է «ՊրոԿրեդիտ Բանկի» մոտ՝ 116.1 %, որը կազմել է 1.1 մլրդ դրամ, իսկ նվազում՝ «Մելլաթ Բանկի» մոտ՝ 38.4 % կամ բանկի ընդհանուր պարտավորությունները նվազել են 3.5 մլրդ դրամով: Սակայն պետք է նշել, որ ընդհանուր պարտավորությունների բացարձակ մեծությամբ առավելագույն աճ արձանագրվել է «ՎՏԲ Հայաստան Բանկի» մոտ, որը կազմել է 27.0 մլրդ դրամ, երկրորդ մեծությամբ աճը գրանցվել է «Յունիբանկի» մոտ՝ 11.0 մլրդ դրամ: Իրավաբանական և ֆիզիկական անձանցից ներգրավված ժամկետային ավանդների ծավալով առաջատար բանկը «Արդշինինվեստբանկն» է՝ 44.4 մլրդ դրամով, այնուհետև նրան հաջորդում են «Յունիբանկը»՝ 34.3 մլրդ դրամով, «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանը»՝ 32.0 մլրդ դրամով, «Կոնվերս Բանկը»՝ 21.1 մլրդ դրամով և «ՎՏԲ Հայաստան Բանկը»՝ 19.0 մլրդ դրամով:

Եռամսյակային կտրվածքով վերոնշյալ ցուցանիշի ներգրավման լավագույն արդյունք ապահովել է «Արդշինինվեսթմենթս», որը բացարձակ մեծությամբ կազմել է 9.1 մլրդ դրամ:

«Հ բանկային համակարգի պարտավորությունները և ֆիզ. անձանց ավանդները (ցպահանջ և ժամկետային) 2008 թ-ի հունիսի 30-ի դրությամբ»



«Հ բանկերի ընդհանուր կապիտալը սույն թվականի 2-րդ եռամսյակի ընթացքում աճել է 8.5 %-ով կամ 15.5 մլրդ դրամով և եռամսյակի վերջում կազմել 199.0 մլրդ դրամ, որը հիմնականում ապահովվել է բանկերի կողմից կուտակված շահույթի, ինչպես նաև կանոնադրական կապիտալի ավելացման հաշվին: Տեղին է նշել, որ ընդհանուր կապիտալը նախորդ տարվա նույն եռամսյակի ընթացքում աճել էր 9.5 %-ով կամ մոտ 12.1 մլրդ դրամով: Ընդհանուր կապիտալի բաղկացուցիչներից մեկը՝ կուտակված շահույթը, սույն տարվա հաշվետու եռամսյակի ընթացքում աճել է 11.0 %-ով կամ մոտ 5.0 մլրդ դրամով՝ եռամսյակի վերջում կազմելով 50.7 մլրդ դրամ կամ ընդհանուր կապիտալի 25.5 %-ը, ընդ որում նախորդ տարվա 2-րդ եռամսյակի ընթացքում կուտակված շահույթն ավելացել էր 7.4 %-ով կամ 2.5 մլրդ դրամով: Ընդհանուր կապիտալի մյուս կարևոր բաղկացուցիչ մասը՝ կանոնադրական կապիտալը, հաշվետու եռամսյակի ընթացքում աճել է 8.5 %-ով կամ 10.3 մլրդ դրամով և եռամսյակի վերջում կազմել 131.7 մլրդ դրամ կամ ընդհանուր կապիտալի 66.2 %-ը: Համեմատության կարգով նշենք, որ 2007 թ-ի 2-րդ եռամսյակի ընթացքում կանոնադրական կապիտալն ավելացել էր 11.1 %-ով կամ 9.2 մլրդ դրամով: Ասվածի հետ մեկտեղ նաև արձանագրենք, որ առաջին կիսամյակի ընթացքում ընդհանուր կապիտալն աճել է 19.8 %-ով կամ 32.9 մլրդ դրամով, այդ թվում կանոնադրական կապիտալն աճել է 18.9 %-ով կամ 21.0 մլրդ դրամով, իսկ կուտակված շահույթը՝ 27.7 %-ով կամ 11.0 մլրդ դրամով: Համադրելիության համար նշենք, որ բանկերի ընդհանուր կապիտալը նախորդ տարվա առաջին կիսամյակի ընթացքում աճել էր 16.5 %-ով կամ 19.8 մլրդ դրամով, այդ թվում կանոնադրական կապիտալը՝ 15.0 %-ով կամ 12.0 մլրդ դրամով և կուտակված շահույթը՝ 24.3 %-ով կամ 7.0 մլրդ դրամով:


Կուտակված շահույթի ցուցանիշով առաջատարը «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան»-ն է՝ 10.5 մլրդ դրամ գումարով, բանկը 2008 թ-ի առաջին կիսամյակի ընթացքում ապահովել է 19.24 %-ի աճ: Նրան անմիջապես հաջորդում են՝ «Կոնվերս Բանկը»՝ 8.4 մլրդ դրամով (աճը 19.47 %) և «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկը»՝ 6.6 մլրդ դրամով (աճը 44.69 %): Հաշվետու եռամսյակի կտրվածքով կուտակված շահույթի նշանակալից աճ ապահովել է «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկը»՝ 1.1 մլրդ դրամով:

Հաշվետու եռամսյակի ընթացքում համակարգի բանկերից կանոնադրական կապիտալը համալրել են չորս բանկ՝ «Անելիք Բանկը»՝ 0.5 մլրդ դրամով կամ 10.4 %-ով, «Առէկսիմբանկը»՝ մոտ 6.0 մլրդ դրամով կամ 240.2 %-ով, «Մելլաթ Բանկը»՝ մոտ 2.0 մլրդ դրամով կամ 56.2 %-ով և «Բիբլիոս Բանկ Հայաստանը»՝ 1.9 մլրդ դրամով կամ 62.5 %-ով:

2008 թ-ի հունիսի 30-ի դրությամբ, ըստ ընդհանուր կապիտալի մեծության, առաջին հնգյակը կազմել են «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկը»՝ 23.6 մլրդ դրամով, «ՎՏԲ Հայաստան Բանկը»՝ 21.9 մլրդ դրամով, «Արդշինինվեստբանկը»՝ 21.1 մլրդ դրամով, «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանը»՝ 13.2 մլրդ դրամով և «Կոնվերս Բանկը»՝ 12.3 մլրդ դրամով: Հաշվետու եռամսյակի ընթացքում տոկոսային արտահայտությամբ ընդհանուր կապիտալի ամենաբարձր աճ է ապահովել «Առէկսիմբանկը»՝ 166.5 %, երկրորդ ցուցանիշը ապահովել է «Բիբլիոս Բանկ Հայաստանը»՝ 59.0 %, իսկ երրորդը՝ «Մելլաթ Բանկը»՝ 54.4 %:

«Հ բանկային համակարգի ընդհանուր կապիտալը, կանոնադրական կապիտալը և կուտակված շահույթը 2008 թ-ի հունիսի 30-ի դրությամբ»

Մլրդ դրամ



ՀՀ բանկային համակարգում հաշվետու եռամսյակի ընթացքում ապահովվել է 5.86 մլրդ դրամ մաքուր շահույթ, որը 2007 թ-ի 2-րդ եռամսյակում ստացված մաքուր շահույթի ծավալը գերազանցել է 0.5 մլրդ դրամով կամ 9.4 %-ով, իսկ սույն տարվա առաջին եռամսյակում ստացված շահույթի ծավալին զիջել 0.3 մլրդ դրամով կամ 4.9 %-ով: Կարելի է արձանագրել, որ համակարգի երեք բանկեր ինչպես առաջին եռամսյակը, այնպես էլ երկրորդ եռամսյակը փակել են վնասով, ընդ որում երկրորդ եռամսյակի վնասը կազմել է 946.6 մլն դրամ (առաջին կիսամյակի ընդհանուր վնասը կազմել է 1,322.4 մլն դրամ): Հարկ է նշել, որ 2008 թ-ի առաջին կիսամյակի ընթացքում համակարգի կողմից ապահովվել է 12.0 մլրդ դրամի մաքուր շահույթ, որը նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի ցուցանիշը գերազանցել է 18.8 %-ով կամ 1.9 մլրդ դրամով: Ընթացիկ տարվա 2-րդ եռամսյակի արդյունքներով համակարգի բանկերից մաքուր շահույթի առավելագույն ծավալ ապահովել է «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկը»՝ 1.21 մլրդ դրամ, որը նախորդ եռամսյակի համանուն ցուցանիշը գերազանցել է 311.9 մլն դրամով կամ 34.6 %-ով, երկրորդ ցուցանիշը պատկանում է «Արդշինինվեստբանկին»՝ 1.18 մլրդ դրամ և երրորդ ցուցանիշը՝ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանին»՝ 0.85 մլրդ դրամ: Առաջին կիսամսյակում ապահովված մաքուր շահույթի գծով առաջատար դիրքերում են՝ «Արդշինինվեստբանկը»՝ 2.48 մլրդ դրամով, «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկը»՝ 2.11 մլրդ դրամով, «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանը»՝ 1.69 մլրդ դրամով, «Կոնվերս Բանկը»՝ 1.29 մլրդ դրամով և «Յունիբանկը»՝ 1.21 մլրդ դրամով, ընդ որում բացի «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանի», վերը թվարկված մյուս բանկերը գերազանցել են նախորդ տարվա առաջին կիսամսյակի համանուն ցուցանիշը: Այսպես, «Արդշինինվեստբանկը» գերազանցել է 651.4 մլն դրամով կամ 35.7%-ով, «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկը»՝ 761.6 մլն դրամով կամ 56.3 %-ով, «Կոնվերս Բանկը»՝ 727.1 մլն դրամով կամ 129.1 %-ով և «Յունիբանկը»՝ 408.3 մլն դրամով կամ 50.7 %-ով, իսկ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանը» զիջել է 199.6 մլն դրամով կամ 10.6 %-ով: Միևնույն ժամանակ նշենք, որ 2-րդ եռամսյակի ընթացքում բանկերի ընդհանուր եկամուտները կազմել են 36.6 մլրդ դրամ, իսկ ծախսերը՝ 28.9 մլրդ դրամ, որոնք նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի համանուն ցուցանիշները գերազանցել են համապատասխանաբար 9.5 մլրդ դրամով կամ 34.9 %-ով և 8.2 մլրդ դրամով կամ 39.9 %-ով: Միաժամանակ նշենք, որ երկրորդ եռամսյակում ապահովված հաշվեկշռային շահույթը գերազանցել է նախորդ տարվա նույն եռամսյակի հաշվեկշռային շահույթի մեծություները մոտ 1.2 մլրդ դրամով կամ 19.1 %-ով և կազմել 7.7 մլրդ դրամ: Միայն ավելացնենք, որ առաջին կիսամսյակում համակարգի կողմից ապահովվել է 71.9 մլրդ դրամի եկամուտ և կատարվել 56.3 մլրդ դրամի ծախս, իսկ նախորդ տարվա նույն ժամանակամիջոցում վերոնշյալ ցուցանիշները համապատասխանաբար կազմել են՝ 51.1 և 38.8 մլրդ դրամ: Հաշվետու կիսամսյակի ընթացքում ստացված ընդհանուր եկամուտների և կատարված ընդհանուր ծախսերի գծով առաջատարը «Արդշինինվեստբանկն»ն է՝ 11.98 և 8.83 մլրդ դրամ գումարներով, իսկ հաշվեկշռային շահույթի ամենամեծ ծավալը նույնպես պատկանում է «Արդշինինվեստբանկին»՝ մոտ 3.15 մլրդ դրամ, երկրորդ տեղում է «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկը»՝ 8.48, 5.83 և 2.65 մլրդ դրամով և երրորդ տեղում՝ «Յունիբանկը» համապատասխանաբար 6.8, 5.28 և 1.52 մլրդ դրամով:


2008 թ-ի 2-րդ եռամսյակի արդյունքներով բանկերի ROE-ն՝ կապիտալի եկամտաբերության մակարդակը, հունիսի 30-ի դրությամբ կազմել է 6.03 %, իսկ ROA-ն՝ ակտիվների շահութաբերության մակարդակը, նույն ժամկետի դրությամբ կազմել է 1.97 %: Պետք է արձանագրել, որ տեղի է ունեցել կապիտալի եկամտաբերության, ինչպես նաև ակտիվների շահութաբերության անկում անցած տարվա նույն ժամկետի համեմատ. ROE-ն նվազել է 2.55 տոկոսային կետով, իսկ ROA-ն՝ 0.53 տոկոսային կետով:

Վերը նշված առաջին ցուցանիշի (ROE) ամենաբարձր արդյունքը եռամսյակի վերջում ապահովել է «Յունիբանկը»՝ 14.71 %, իսկ երկրորդ ցուցանիշինը (ROA)՝ «Մելլաթ բանկը»՝ 2.31 %, ընդ որում նախորդ տարվա նույն ժամկետի համեմատ կապիտալի եկամտաբերության ամենաբարձր արդյունք ապահովվել էր «Արդշինինվեստբանկի»

կողմից, որը կազմել էր 18.94 %, իսկ ակտիվների շահութաբերության գծով՝ «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկի» կողմից՝ 3.55 %:

ՀՀ բանկային համակարգի հիմնական ցուցանիշների գծով տեղեկությունները՝ ըստ բանկերի արտացոլված են աղյուսակ 1-ում:

ՀՀ բանկային համակարգի ամփոփ ցուցանիշները



2008 թ-ի հունիսի 30-ի դրությամբ հիմնական ցուցանիշները ըստ բանկերի,
դրանց աճը առաջին եռամսյակի ընթացքում և բանկերի գրավված տեղը համակարգում

Աղյուսակ 1.
(նլն դրամ)

Հ/Հ	Բանկերի անվանումը	Ընդհանուր ակտիվները					Ընդհանուր պարտավորությունները					Ընդհան		
		Ընդհան- մենը	աճ/ նվազ (%)	Գրավ- ված տեղը համա- կարգ	այդ թվում		Ընդհան- մենը	աճ/ նվազ (%)	Գրավ- ված տեղը համա- կարգ	այդ թվում		Ընդհան- մենը	աճ/ նվազ (%)	Գրավ- ված տեղը համա- կարգ
					Վարկ. ներդր- ումները	աճ/ նվազ (%)				Ֆիզ.անձ ժամկ. ավանդ	աճ/ նվազ (%)			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1	Արդշինհիմնվեստբանկ	107845,6	3,1	2	73469,6	5,0	86705,5	2,3	3	19194,4	18,6	21140,1	6,5	3
2	Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստ.	105530,7	4,4	3	63449,7	8,3	92283,7	4,3	1	23400,1	10,4	13247,0	4,9	4
3	ԱԿԲԱ-Կրեդիտ Ազրիկոլ Բանկ	88061,5	2,7	4	66166,3	1,5	64442,2	1,3	4	11976,6	7,3	23619,2	6,6	1
4	ՎՏԲ Հայաստան Բանկ	112365,1	32,4	1	61045,0	34,6	90488,9	42,6	2	11958,5	29,3	21876,3	2,3	2
5	Կոնվերս Բանկ	62263,6	10,9	6	36206,6	14,9	49937,8	12,0	6	13009,2	62,5	12325,7	6,3	5
6	Յունիբանկ	63367,0	22,4	5	40584,1	30,3	55112,1	24,8	5	30352,0	3,1	8254,9	8,5	9
7	Հայէկոնոմբանկ	47860,0	10,7	7	25149,2	-0,1	39400,8	13,9	7	4627,7	21,5	8459,1	-2,0	8
8	Ինեկոբանկ	37752,6	2,4	8	27370,2	17,3	30409,7	2,1	9	8782,9	3,1	7342,9	3,5	11
9	Անելիք Բանկ	36815,1	7,0	9	19968,3	11,7	31161,4	8,0	8	7451,5	8,2	5653,7	2,1	14
10	Հայբիզնեսբանկ	33744,2	16,0	10	21501,0	23,5	27195,2	19,4	10	8702,0	6,6	6549,0	3,7	12
11	Արարատբանկ	25135,6	-4,1	14	12077,9	9,7	19871,9	-5,8	14	1634,9	61,2	5263,7	3,0	15
12	Արցախբանկ	26886,3	16,1	13	18263,6	12,9	22039,5	19,0	12	6545,7	187,8	4846,7	4,3	19
13	ԱրմՍվիսԲանկ	22377,9	-2,8	15	6638,2	21,8	18476,5	-3,1	15	1225,0	-0,3	3901,4	-1,4	22
14	Ամերիաբանկ	30307,9	43,4	11	18397,1	116,3	22412,1	68,9	11	1188,7	35,0	7895,8	0,3	10
15	Առէկսիմբանկ	29514,4	50,8	12	12882,3	8,5	19852,2	24,5	13	6961,5	15,6	9662,3	166,5	6
16	ԲՏԱ Ինվեստբանկ	13291,2	-9,8	18	9835,1	-8,1	8695,6	-9,0	17	576,5	8,8	4595,7	-11,3	21
17	Պրոմեթեյ Բանկ	14300,3	-0,1	16	7373,1	-7,8	5735,4	-3,8	19	925,6	18,3	8564,9	2,5	7
18	Մելլաթ Բանկ	11375,2	-11,1	19	4257,6	-35,1	5557,6	-38,4	20	141,7	-1,5	5817,5	54,4	13
19	Զարգ. Հայկական	13669,9	8,0	17	8660,6	10,4	8737,0	10,9	16	3706,6	44,2	4932,8	3,3	18

	Բանկ													
20	Կասկադ Բանկ	10846,4	-7,2	20	6512,8	5,6	5772,4	-13,4	18	825,9	2,2	5074,0	0,9	17
21	ՊրոԿրեդիտ Բանկ	7257,9	15,1	22	4236,2	205,2	2046,9	116,1	22	283,5	43,0	5211,0	-2,8	16
22	Բիբլոս Բանկ Հայաստան	7913,2	45,5	21	3534,8	41,8	3157,5	29,0	21	1110,1	5,8	4755,7	58,9	20
	Ընդամենը	908481,6	10,9		547579,3	13,7	709491,9	11,7		164580,6	17,5	198989,4	8,5	1